Հաշվետվություն

Անունը, Ազգանունը

Մակար Ղամբարյան

Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները

Լաքսենբուրգ (Ավստրիա) 2017 թվականի հունիսի 25-27-ը

Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Լաքսենբուրգ քաղաքում Կիրառական Համակարգերի Վերլուծության Միջազգային Ինստիտուտի կողմից նախատեսվող բարձր մակարդակի ղեկավարների ԵՏՄ և ԵՄ ինտեգրման հարցերով քննարկում-ֆորումին մասնակցություն:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հունիսի 26-ին ֆորումի ընթացքում ներկայացրել եմ ՀՀ-ԵՄ միջև նոր շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունների արդյունքները և շրջանակային համաձայնագրի հակիրճ նկարագրությունը:

Ֆորումի ընթացքում քննարկումներ են ծավալվել նաև հետևյալ հարցերի շուրջ՝

1. Տնտեսական Ինտեգրման Մարտահրավերները ու Հնարավորությունները ավելի լայն Եվրոպական և Եվրասիական տարածության սահմաններում,

2. ԵՄ գործարարների համագործակցությունը ԵՏՄ պետական և մասնավոր հատվածների հետ և վերջինիս հեռանկարները,

3. ԵՄ-ԵՏՄ կառուցվածքային համագործակցության հիմնախնդիրները և հեռանկարները:

Հանդիպումներ և քննարկումներ եմ ունեցել Կիրառական Համակարգերի Վերլուծության Միջազգային Ինստիտուտի գլխավոր տնօրենի, ԵՀ-ի Եվրոպայի Հարևանության և Ընդլայնման հարցերով գլխավոր տնօրինության Արևելյան Հարևանության տնօրինության տարածաշրջանային ծրագրերի բաժնի վարիչի, Գերմանիայի Շնայդեր ընկերության հիմնադրի, Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության Եվրասիական բաժնի պետի, ԵՀ-ի Առևտրի գլխավոր տնօրինության ԱՊՀ երկրների հետ հարաբերությունների բաժնի պետի և Գերմանիայի Քաղաքական Հետազոտության Ինստիտուտի տնօրենի հետ:

Կիրառական Համակարգերի Վերլուծության Միջազգային Ինստիտուտի գլխավոր տնօրեն Պավել Կաբատի հետ նախնական պայմանավորվածության համաձայն նախատեսվում է երկրորդ փուլի արդյունքների ներկայացման կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում:

Գործուղվողը

Մակար Ղամբարյան

Ամսաթիվը

30.06.2017թ.